




ԻՆՆԵՐՈՐԴ ՏՍՐԻ

ԹԻԻ 3

Ս. Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՐՏ 31

1874

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ

Ս. Մ Ս Ա Գ Ր-ն որ կը խոստովանի, որ Քրիստոնեակութեան ուսումնն առաջ որչափ որ մեծ նշանակութիւն ունէր մեր Ազգի համար, այսօր եւս ընդհակառակն այնչափ իւր նշանակութիւնը կը բուսած է. երբեմն որչափ որ ազգային դաստիարակութեան մէջ առաջին տեղն դրաւած էր, կամ այլապէս աւելի, Ազգ. դաստիարակութեան հիմնն եղած էր, այժմ եւս այնչափ բարձի թողի եղած է:

Թերեւս ըսողներ լինին թէ ի՞նչ կը հետեւի ասկէց. առաջ որովհետեւ Քրիստոնեակութիւնը նոր կը քարոզուէր, կամ նոր կը հաստատուէր, պէտք էր որ առաջին ուսումնն լիւեր, կամ, որովհետեւ առաջ հեթանոսութիւնը

ամենայն զօրութեամբ ընդդէմ կը դէնէր քրիստոնեակութեան, հարկ էր, որ քրիստոնեայք նոյն ուսմամբ դիմակուէին, և քանի որ հիմա քրիստոնեակութիւնը իւր դէմ չունի այնպիսի զօրութիւն մի, հարկ եւս չը կայ առաջին լինելուն: Սակայն մեք կը պատասխանեմք, որ մարդք քրիստոնեակութիւնը ուսանելու է իբրեւ առաջին պարտաւորութիւն ոչ անոր համար, որ հեթանոսութենէ արժարժուած պատեւրազմի առաջն առնէ. այլ ճշմարտապէս զԱստուած ճանաչելու, սիրելու և նմա ծառայելու համար, առանց ոչ ոյ մարդ չէ կարող հանդիստ և եղանակ լինիլ, և արդէն սրտամոխիւն չի ձեռնին կարող եմք հաստատել որ հա-

լաճանքը կամ հեթանոսութենէ ծագած պատերազմը ոչ միայն չէ կարող թալանցնել բրիտաննեութիւնը, այլ առաւել կը զօրացնէ և կ'ամրացնէ հաւատացելոց հոգեւոր կապը, այն է սէր առ Աստուած և սէր առ մարդիկ, միայն հեշտութիւնը եւ աշխարհասիրութիւնն է, որ զբրիտաննեութիւնը կը ծառայէ և խաղաղասուս կը շինուցանէ բրիտաննեական հուրը:

Մեր համոզումն է, որ մինչեւ դաստիարակութեան մը հիմն այս ուսում մըն չը լինի, նոյն դաստիարակութիւնը օգտակար չը լինիր, որովհետեւ միայն սոյն ամենամեծ ուսումն է, որ արմատաքի կը խլէ մարդոյ սրտէն մոլութեանց և մտքէն մոլորութեանց արմատներն: Ուստի կարող եմք ասել, որ այս ուսման պակասութիւնն է պատճառ Ազգին արդի բարցական կենաց աննորոգութեան և յետադիմութեան, ընտանեկան կենաց ապականութեւ, վարուց և բարուց եղծման, մէկ խոսքով Ազգ. կենաց ամենակերպ տարերացականութեւ: Մեր հայրերը հրոյ, սրոյ, կասկանաց, բանտից և վտարանդութեւ դարերուն մէջ կարող եղան սուրբ եւ անսրտատ պահպանել կրօնը և ազգութիւնը, որովհետեւ քաջ գիտէին Աւետարանի ուսումն, իսկ մեք սոյժմ անկարող եմք և անտարբեր, որովհետեւ բրիտաննեական շինող ուսման կարեւորութիւնը չեմք ճանաչեր: Թէ և Ազգին այս վիճակը ամեն խորհող միտքերու և ամեն զգացող սրտերու վերայ ծանրացած է, թէեւ այս մասին ամեն որ, դպրոցական ուսանողէն ըսկրօնաւ մինչեւ վերին աստիճանի գրագետը սղը կը կարդայ, սակայն ի հարկէ միայն ողբը բաւական չէ, ողբը աւելի յուսահատութեան նշան է, քան թէ շինութեւ, բայց յաւալի է ասել, որ շատ քիչերն շինելու նպատակու ընդ

կերպով և կը խորհին կը հետաքոսն Ազգ. յառաջադիմութեան միջոցներն, շատ քիչերն կարեկից ոգւով դարձան մի տանելու համար ձեռք կը կարկառեն, յորոց ոմանք եւս սխալ և անհիմն դատողութեամբ կը կարծեն, որ ազգ. կենանքը վերանորոգելու համար բաւական են Եւրոպական մի քանի լեզուներն, բաւական են մի քանի ուսմանց չոր և յամաք նախագիտելիքներն, ոմանք եւս կը կարծեն թէ Ազգին վիճակը կարող են բարելաւել Եւրոպական կրթութեամբ առանց ազգային դաստիարակութեան:

Մեք կ'ընդունինք, որ Հայ-մանուկը իբրեւ մարդ ամեն կրթութեան ընդունակ է և պէտք է նորա տալ այն պիտի կրթութիւն մի, որով կարող լինի ապրիլ իբրեւ անդամ ընդհանուր մարդկութեան, այլ սակայն ամենէն առաջ իբրեւ մասնաւոր ազգի մը անդամ, իբրեւ Հայ, ապրելու ուսումը պէտք է ունենայ, վասն զի մարդկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգաց ամբողջութիւնը, ուստի եթէ ազգաց վիճակը բարելաւ լինի, բարելաւ կը լինի և բովանդակ մարդկութեան վիճակը և փոխադարձաբար: Ուրեմն մեր ամենէն առաջին պարտաւորութիւնն է Հայ-մանկուայն նախ զուտ ազգային դաստիարակութիւն մի տալ և ապա ուրիշ մտաւոր շինուածներն նորա վերայ հիմնել:

Զրկամենալով այս տեղ ընդարձակ բացատրել ազգային դաստիարակութեան ինչութիւնը, այս միայն կ'ասեմք, որ Հայ-մանկութիւնն նախ պէտք է ուսանի իւր մայրենի լեզուն, իւր կրօնը և Ազգ. պատմութիւնը: Ինչ որ է, լեզուն քիչ շատ կ'ուսուցանեն դրսեւորաց մէջ, նոյնպէս Ազգ. պատմութիւնը, թէ պէտ շատ անկենդան եղանակաւ, բայց կրանի ուսումը բողոքովին

երեսի վերայ մնացած է ։ Անցեալ տարի ուրախութեամբ կարգացինք լրագրաց մէջ, թէ Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովը որոշած է քրիստոնէական ուսումն պարտաւորիչ առնել Ազգ. դպրոցաց մէջ և թէ՛ այս մասին յատուկ ուսուցիչներ նշանակած էր. սակայն այժմ չենք գիտեր թէ ի՞նչ վիճակի մէջ է, միայն կը մտադրեմք, որ այն կարեւոր եւ օգտակար որոշումը շարունակ գործադրութեան մէջ մնայ ։

Սուրբ Աթոռս եւս, որ քրիստոնէական դաստիարակութեան կարեւորութիւնն խիստ խորին կերպիւ կողոյ եւ կը ջանայ գէթ դասական գրեանց հրատարակութեամբ նպաստել ազգային դպրոցաց յառաջագիմութեան, անցեալ տարի Տաճկաստանի հայկական բարբառով ի լոյս ընծայեց Պ. Ս. Շանչեանցի աշխատասիրած « Համառօտութիւն Քրիստոնէական Ուսման Հոյառօտանեաց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և վերնագրով դասագիրքն ։

Տակաւին սոյն դասագրքի պարունակութեան մասին բան մի չ'ասած, զայս կ'ուզեմք ասել, որ « Քրիստոնէական Ուսման Համառօտութիւնը » երկու ամենամեծ եւ գեղեցիկ յատկութիւն ունի. նախ՝ որ ըստ ուղղափառ վարդապետութեան Եկեղեցւոյ նախնի Ս. Հարց իւր հիմունքը կամ աղբիւրակն Ս. Գիրքն է, որով ուսանող մանուկներն կ'առաջնորդէ դէպ ի Ս. Գրքոց հոգին և վարդապետութիւնը եւ այսու կարող եմք ասել, որ մանկանց ձեռքը բանալի մի կարող է լինիլ Ս. Գիրքը կարգալու և հասկանալու համար ։ Երկրորդ՝ որ ուսանող մանուկը իրենց անձը, հոգին եւ ոիրար կարող են քննել Ս. Գրքոց պատուէրներուն և ճշմարտութեանց համաձայն ։ Սոյն երկու ամենամեծ յատկութիւնքն անհրաժեշտ կ'որեւոր են ամեն քրիստոնէական ուսման վերաբերեալ դասագրքերուն, զորս կարող է ամեն ու չիմ'ընթերցող զանեւ ակն յայտնի Մեծ. Շանչեանցի ներկայ եղական գործոյն մէջ ։

Սոյն գործոյն պարունակութիւնը գլխաւորաբար երեք մասն կը բաժանի. Ա. ԿՐԾՆ. Բ. ՀԱՌԱՏ. Գ. Ա. ԴՅԹՔ ։ Հեղինակը այս երեք ամենամեծ նիւթերուն վերայ կը խօսի ոչ խոր թիւն և անխմանալի, այլ պարզ ոճով և ամենուն բնական եղած եղանակաւ, այսինքն որտի եւ զգացման լեզուաւ, զոր ամեն մարդ առ հասարակ առանց դժուարութեան կը հասկանայ ։

Ա. Մասին մէջ առհասարակ կրօնի վերայ խօսելով՝ կը տահմանէ թէ՛ ի՞նչ ասել է ճշմարիտ կրօնը. կը բացատրէ նորա օգուտները և յորմէ կը հեռուցինէ կրօնի ուսման անհրաժեշտ կարեւորութիւնը ամեն աստիճանի եւ կարգի մարդկանց. որովհետեւ կ'ասէ « Կրօնն է գործնական գիտութիւն, որ Աստուծոյ հետացած մարդը կրկին կը մօտեցնէ, կը կոպէ եւ նորա հետ կը միացնէ . . . առանց՝ նորան (Աստուծոյ) մօտենալու մարդ կարող չէ երջանիկ լինիլ » ։ Յետոյ կը հաստատէ, որ կրօնի հիմը Աստուած է, որոյ գոյութիւնը կը հաստատէ Մաքով, Խըղճ մօտեքով, ընդհանուր խառնովանութեամբ ամենայն ազգաց և Աստուածաշունջ Ս. Գրքով, որոյ վեմութիւնը եւ ուսման օգտակարութիւնը կը բացատրէ սրանչէր եղանակաւ ։

Բ. Մասին մէջ կը խօսի թէ՛ հաւատալ առհասարակ ի՞նչ կը նշանակէ և կրօնի մէջ ի՞նչ կը նշանակէ. մեկին կերպով կը բացատրէ, որ քրիստոնէական հաւատոյ գլխաւոր հիմն Յիսուս Քրիստոս է. կը խօսի թէ՛ « Մարդ պարտաւոր է իմանալ հաւատոյ ճշմարտութիւններն և այն հաստատութիւններն

բըն, որոց վերայ հիմնուած են, վասն
զի առանց ճանաչողութեան չը կայ
հաւատ, չը կայ դատողութիւն: Կը
խօսի նոյնպէս թէ՛ ճշմարիտ հաւատն
ինչ նշաններ ունի և Ս. Գրոց վերայ
թիւններով կը հաստատուէ, որ մեք հա-
ւատով Աստուծոյ որդի կը լինինք, իրա-
ւոնք կը ստանանք ժողովուրդ Աստուծոյ
համարձակութեամբ, կ'արժանանանք յա-
րկնական կեանք, կը զօրանանք եւ յաղթող
կը գտնուինք աշխարհիս սրտերալմկն
մէջ: Սոյն մասին մէջ կը խօսի նմանապէս
Հանգանակի, Աստուծոյ նախասնամու-
թեան և Եկեղեցւոյ խորհրդոց վերայ:

Գ. Մասին մէջ Աղօթքին բուն նը-
շանակութիւնը կը բացատրէ եւ կը
հաստատուէ, որ Աղօթքն է իբրեւ էա-
կան պարգաս-որդութիւն մարդոց առ Աստ-
ուած, իբրեւ միայնակ ճանապարհ առ-
տուածային հարկաւոր և թանկագին
չորհրդներն ստանալու, իբրեւ պայման
Աստուծոյ ողորմութիւն ստանալու,
իբրեւ փառաւոր իրաւունք մտնենալու
Թագաւորին Թագաւորաց, իբրեւ
սրբութեան ճանապարհ, որ զմեզ կը հե-
ռացնէ աշխարհայիններէն և կը ամենի
զէպ'ի հոգեւորներն, իբրեւ կրօնի նը-
պասակ և տուող գլխաւոր բարութեան:
Կը խօսի թէ՛ առ ո՞ր պէտք է ուղղենք
մեր Աղօթքը և աղօթելու ժամանակ
սրբիտի բարեպաշտական սուրբ ըզ-
գացմունքներով լցուած պէտք է լի-
նինք: Ի մի բան կը հաստատուի, որ
Աղօթքն է մարդոց համար մեծ պարգա-
ս-որդութիւն և իրաւունք, և թէ՛ անգա-
ղար աղօթքն ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ
շարժումն հոգւոյ առ Աստուծոյ: Այնու-
հետեւ Տէրութեան աղօթքը մասն
առ մասն կը բացատրէ և կը վերջա-
ցնէ հետեւեալ համառօտ, բայց
սքանչելի խօսքով. «Եթէ Տէրութեան
Աղօթքն մեք ջերմեռանդութեամբ
կ'անենք, պէտք է ուրեմն մեր կեանքն

եւս համաձայն վարել մեր խնդրուա-
ծոցն:

Ահա ամիկ ամբողջ դասագրքի պա-
րունակութեան համառօտ քննարկը:

Թէ ինչպիսի վսեմ և ճշիւ կերպով
բացատրած է այս ամենը, ընթերցողաց
հասկացնելու կամ գոնէ փոքրիկ ծա-
շակ մի տարւել համար պատշաճ կը
համարինք իւրաքանչիւր մասէն ինչ
ինչ հաստուածներ յառաջ բերել. թէ
եւ մեզ համար ամբողջ դասագրքն
ծայրէ 'ի ծայր մի և նոյն վսեմութիւ-
նը, ճոխութիւնը և արժանիքն ունի-
բայց որովհետեւ յօդուածիս համառօ-
տութիւնը չը ներեր, եթէ ո՛չ ամբողջն
գոնէ մեծ մասը աստ օրինակել, ուս-
տի սրբութեամբ և մեք համառօտ
հաստուածներ միայն առնուլ:

Կրօնի գոյութիւնը խղճմանքով
հաստատուել ժամանակ կ'ասէ, «ԹՂՃ
ՄԸՏԱՆՔՆ Է հոգւոյ մի այնպիսի զօ-
րութիւն, որ մեզ կը հասկացնէ մեր
պարտաւորութիւնն և նովաւ կը զաւ-
նադաննէք բարին՝ չարէն...»: Հոգւոյ
այս ներքին զօրութիւնը, զոր խղճմանք
կ'անուանենք կարող է բացուիլ և լու-
սաւորուիլ հոգեւոր անդով: Բայց սը-
նունդը երբեք չէ կարող ստեղծել
զայն: Ինչպէս որ մարդոց միտքն ըն-
դունակ է կատարելագործուելու եւ
լուսաւորուելու, բայց ինքն պտուղ
չէ աննդեան, նոյնպէս և խղճմանքը:
Այդա թէ ոչ, զսուր կը խօսէին մարդոց
հետ ճշմարտութեան վերայ, եթէ
խղճմանքը ծնուած չը լինէր մարդոց
հետ: Սորա տարացոյցն մեք կը անու-
նենք, որ ամենայն հասակի, ամեն
աստիճանի, թէ՛ լուսաւորեալ և թէ՛
կոյր մարդիկ, ամեն աշխարհի և ամեն
վիճակի մէջ, միշտ կը լսեն խղճման-
քի ձայնն և ո՛չ մի կերպով չեն կարող
լսեցնել և կտրել այս ձայնը: Նոյն
պէս կը հաստատուէ, որ խղճմանքը ծը-

նունդ չէ ո՛չ ելի-լի և ո՛չ հա-սն-թեան
և ապա կը յարէ . « Այսպէս կը հա-
տառուի ահա՛, որ խղճմաները ա-
ռաքին իրաւութեանց ծնունդ չէ, այլ
յայն է Աստուծոյ յայն Արարիչն » :

Հաւատոյ վերայ խօսելով՝ կ'ասէ .
« Հաւատն է մի առաւածային ներ-
գործութիւն մարդոց հոգւոյ վերայ և
կարելի չէ, որ ծագած լինի նա մեր
մորէն, այլ Հոգին Սուրբն է, որ կը
ծնանի մեր մէջ ճշմարիտ հաւատ : Եւ
արդարեւ՝ եթէ քննեմք հասարկ ա-
խոյն, կը տեսնեմք պարզապէս, որ հա-
ւատը չէ կարող ծագիլ մարդէն : Վասն
զի Աստուծոյ յայտնած ճշմարտու-
թիւններն մարդոց մօրով գտնուելու
ճշմարտութիւններ չեն : Բաց յայտ-
նանէ, մեր ընդունակ չեմք առանց
Հոգւոյն Սրբոյ զօրութեան ընդունիլ
մեր մօրով հաւատոյ ճշմարտութիւն-
ներն և նովաւ փրկուիլ : Վասն զի՝ մեզ-
քը հեռացնելով զմեզ Աստուծմէ խա-
ւարեցուցած է մեր միտքը, ինչպէս
կ'ասէ Առաքեալն Պօլոս . « Քանզի
չնշաւոր մարդ ո՛չ ընդունի զՀոգւոյն Աս-
տուծոյ : զի յիմարութի է նմա, և ո՛չ
կարէ գիտել եթէ հոգեպէս քննիցի » .
Ա. Կորն. Բ. 14 . . . : Հոգին Սուրբ
կը ներգործէ մարդոց վերայ, որ մար-
դոյ մէջ ծնանի հաւատ՝ արտաքին մի-
ջոյնելով, Աստուածաշունչ Քրիստ ըն-
թերցանութեամբ, աղօթքով և Ակե-
ղեցական խորհրդներով : Այս արտա-
քին ներգործութիւնը միշտ պէտք է
կոպտած լինի ներքին ներգործութե-
հետ : Մարդն եւս պէտք է աշխատի
իւր կողմէն, որ արժանանայ Աստու-
ծոյ ողորմութեանը » :

Վերջապէս Աղօթքը բացատրելու
ժամանակ կ'ասէ . « Աղօթքը պէտք է
լինի Բարձրագոյն, յորմէ և կախուած են
բոլոր զգացողութիւններն և պէտք է
լինի ո՛չ թէ հարկադրութեամբ և յանդի-
մանով, այլ ազատութեամբ և հա-
մարձակութեամբ : Աղօթքը պէտք է լինի
Աղօթքի տեսակով, որովհետեւ մեր
հոգեպէս պէտք է լինի Բարձրագոյն
Բարձրագոյն և ճշմարտութեամբ, որ
ստանաւք Աստուծմէ : մեր խնդրուած-
քը : Այս տեսակ աղօթքը ընդգէմ է
մարդկանց կեղծաւորութեան և սուտ
բարեպաշտութեան, որք միայն շրջու-
թով կը պաշտեն զԱստուած և չ'ու-
նին ջերմեանդութիւն առ Աստուած :
Երբ կ'աղօթեմք, պէտք է մեր կողմէն
եւս աշխատեմք գործ դնել այն միջոց-
ներն, զոր Աստուած մեզ կը տայ, որ-
պէս զի մեր գործը և կեանքը համա-
ձայն լինին մեր աղօթքին » :

Աղօթք, այլ ազատութեամբ և հա-
մարձակութեամբ, որովհետեւ մեր
կոպտութեամբ պէտք է լինի Բարձրագոյն
Բարձրագոյն և ճշմարտութեամբ, որ
ստանաւք Աստուծմէ : մեր խնդրուած-
քը : Այս տեսակ աղօթքը ընդգէմ է
մարդկանց կեղծաւորութեան և սուտ
բարեպաշտութեան, որք միայն շրջու-
թով կը պաշտեն զԱստուած և չ'ու-
նին ջերմեանդութիւն առ Աստուած :
Երբ կ'աղօթեմք, պէտք է մեր կողմէն
եւս աշխատեմք գործ դնել այն միջոց-
ներն, զոր Աստուած մեզ կը տայ, որ-
պէս զի մեր գործը և կեանքը համա-
ձայն լինին մեր աղօթքին » :

Արդարեւ, որ բարեմիտ ընթեր-
ցողք գոհ կը լինին դասագրքին պա-
րունակութեան մասին այսչափ միտ-
քիկ ծանօթութեանէն :

Գալով դասաւորութեան, կ'ա-
սեմք, այնպիսի դասաւորութիւն մի
ունի, որ ուսանող մանկան որովհետեւ
հոգւոյն հետ կը խօսի, կամ ուրիշ
կերպով ասեմք, ուսանող մանկան լոկ
ճշմարտութիւն չ'աւանդէր, որ շատ
անգամ անպտուղ կը լինի, այլ և ման-
կան սիրան և հոգին զարգացնելով կը
բարձրացնէ : Քրիստոնէական ուսման
մէջ ամենէն աւելի այս եղանակն ա-
ռաւել շնորհական եւ օգտաւէտ է .
վասն զի Քրիստոնէութիւնը լոկ գի-
տութիւն չէ, այլ էապէս կեանք մի է,
որոյ յարատեւութեան համար ան-
շուշտ սնունդ հարկաւոր է . և այս սը-
նունդն է Քրիստոնէին սրտի և հոգւոյ
զարգացումն հանգերձ ճանաչողու-
թեամբ քրիստոնէական ճշմարտու-
թեանց և պարտաւորութեանց :

Այս ամեն օգուտէն յատկաւ թիւներն տեսնելով՝ ամենայն վրաս հաւթեամբ և լի յուսով՝ կրօնի ամեն ուսուցչաց խորին ուշադրութիւնը կը հրաւիրեմք, և կ'առաջարկեմք, որ սիրով եւ յօժարութեամբ ընդունին Վարժարանաց մէջ և աւանդեն Հայ մանկանց: Մէք համոզուած եմք, որ երբ կրօնի դաստիարակներն լաւ կերպով ուսուցանեն մանկանց, սակաւ ժամանակէն մեր ակնկալածէն աւելի պիտի փայլի օգուտը: Մեր համազումն և հաւատքն այն է, որ մինչեւ Քրիստոնէութեան ուսումն Ազգային դաստիարակութեան հիմունք չը լինի, միշտ կազն 'ի կազն պիտի ընթանայ, բնաւ չը պիտի յառաջագիմէ, և եթէ քիչ շատ յառաջագիմէ եւս, առաւել Հայ ընկերականութեան փաստակար պիտի լինի, քան օգուտակար: Երբ ազգային դաստիարակութեան չէնքը Քրիստոնէական կրթութեան վերայ բարձրանայ, միայն այն ժամանակ կը յուսամք, որ Ազգին մէջ եղած դպրոցներն Հայրենեաց և Եկեղեցւոյ նպատակին պիտի ծառայեն: Վասն զի ինչպէս ակն յայտնի կ'երեւի դաստիարակութեան ներկայ անկերպարան վիճակէն, որ ուրիշ բան մը բրած չունի եթէ ոչ Հայ մանկտին զուրկ սրբոյ եւ մտաց զարգացումէ, հարեւանցի կերպով միայն կը դրօշմէ ինչինչ դիտութեանց մէջ: որով Ազգին վիճակն հետզհետէ աւելի կը վաթմարանայ և կը դիակնանայ: Վասն զի երբ ազգի մը անհատներու սրտին մէջ պէտք եղածին չափ կրօնի սէրը տեղ չունի, ըսել է նոյն ազգին կենդանական զօրութիւնը սպառած է: Մի այս պիտի կայութեան հետեւանքը ազեւտալի է, մանաւանդ մեր Ազգին նման Ազգի մը, որոյ կեանքը եւ անունը ընդ միշտ կրօնին եղած է:

Ի՞նչ ՊԵՏԻ ԼԻՆԷՐ ԸՆԿԼՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՎԻՃԱԿԸ . ԵԹԷ ՔՐԻՍՏՈՆԵՍԻՈՒԹԻՒՆԸ ՁԵ
ԲԵՒՆԷՐ ԲՆԵՒԻ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՅ

(Հարեւանութիւն, տես թիւ 2.)

Արդեօք գերիներն բարձրացած են, նոքա եւս իրենց տեարց նման աւնորէն էին. նոքա մի և նոյն զուարճութեանց և մի և նոյն պատուոյ մասնակից կը լինէին, մի և նոյն կրօնքն ունէին և այս եռանդուն կրօնն բարոյական կանոնաց փոփոխման մասին եղած ամեն յոյս իսպառ կը ջնջէր: Այլ ևս գիտութիւնք յառաջանալու տեղ յետոյս յետոյ կրննթանային և արուեստներն կ'անկանէին 'ի կործանումն: Փիլիսոփայութիւնը միմիայն տեսակ մի ամբարշտութիւն կը տարածէր, որ առանց կոնց կործանման առաջնորդելու, մեծամեծաց մէջ անաստուածութեան մեղքեր և թշուառութիւններ ծնանելով, ստորայնոց առջեւ ալ սնապաշտութեան չարիքներն կը դիզէր: Եւ միմէ կարելի էր յառաջագիմած համարել մարդկային ազգը՝ Կապիտոլիոնի չաստուածոց չհաւատալուն և կուսքերն անարգանք մերժելուն համար: Տակիտոս կը հաստատէ որ տակաւին գաւառաց խորքը կը գանուէր բարոյականութիւն. բայց այս գաւառներն սկսած էին ընդունիլ քրիստոնէական կրօնն, որով մեր իրաւունք կ'ունենանք վերահաստատիլ մեր կարծեաց մէջ թէ՛ քրիստոնէութիւնը տակաւին հանրածանօթ չէր և բարբարոց իրենց անտառաց խորերէն մեկնած չէին: Գալով հռոմէականաց զինուորական դասուն, որք հաւանականաբար մասն առ մասն բաժնած էին կայսրութիւնը իւրեանց մէջ, սոքա եւս մնացեալ քաղաքացւոց նման ապականուած էին բարոյք, և թերեւս